

**Բեռլինի 'Ճանաչում' աշխատանքային հանձնախմբի նախագահ, ակնավոր հայազետ դր. Թեսսա Յոֆմանը օրերս հանդես է եկել Թուրքիայի վարչապետին ուղղված մի հրապարակային կոչով, որին միացել են Վտանգված ժողովուրդների միջազգային, ինչպես և Շվեյցարիայի ընկերությունները, մարդու իրավունքների պաշտպանության թուրք-գերմանական TÜDAY կազմակերպությունը, Ցեղասպանության հակառակորդների միությունը, Շվեյցարիա-Յայաստան ընկերությունը, Բեռլինի հայկական համայնքը և մի շարք այլ հեղինակավոր կազմակերպություններ ու ընկերություններ: Ստորև ներկայացնում ենք այդ կոչի ամբողջական բովանդակությունը, որը գերմաներենից թարգմանել է Աշոտ Յայրունին:**

Թուրքիայի հանրապետության վարչապետ  
պարոն Բեշեթ Թաիբ Էրդողանին  
Անկարա

Չարգելի պարոն Էրդողան,

Դուք թերթի հրատարակիչ և լրագրող Յրանտ Դինքի 2007 թ. հունվարի 19-ի նենգաբարո սպանությունը դատապարտել եք որպես մի՝ նաև Թուրքիայի հանրապետության դեմ ուղղված հարված: Նման կերպով, պարզորոշ բառերով նաև հանրապետության նախագահ Ահմեդ Նեկդեթ Սեզերին, ինչպես և արտգործնախարար պարոն Գյուլն են ահաբեկչությունը դատապարտել և մտադրվել են այդ դեպքը շուտափույթ կերպով պարզաբանման ենթարկել: Դուք, պարոն Էրդողան, 2006 թվին, Յրանտ Դինքի սպանությունից առաջ, հանդես եք եկել քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը հանելու դեմ: Մեր համոզմամբ, արդարև, ուղղակի կապ կա դատական ատյանով ըստ 301-րդ պարագրաֆի Յրանտ Դինքի դատապարտման, դրա հետ կապված նրա՝ որպես ազգային արժանապատվությունն 'անարգողի', հրապարակային անվանարկման, հասարակական մեծամասնականության համար ատելի ազգային փոքրամասնությունը նրա պատկանելու և նրա սպանության միջև: Հանցագործության՝ որպես Թուրքիայի հասարակության և պետության շահերի դեմ ուղղված հարվածի՝ Ձեր կողմից կատարված դատապարտման կապակցությամբ մենք հույս ենք տածում, որ Դուք կվերանայեք ու կփոխեք 301-րդ պարագրաֆի հանման վերաբերյալ Ձեր ունեցած դիրքորոշումը: Միաժամանակ մենք Ձեզ թախանձագին խնդրում ենք աջակցել հետևյալ փոփոխությունների իրականացմանը, որոնք մեզ անհրաժեշտ են թվում նման հանցագործությունների կրկնումը կանխելու և Թուրքիայում ոչ մուսուլմանական փոքրամասնությունների դրությունը բարելավելու համար.

- Թուրքական քրեական օրենսգրքի 301-րդ պարագրաֆը անվերապահորեն հանել:
- Իսկույնները դադարեցնել 301-րդ պարագրաֆի նման այլ հոդվածների հիման վրա ձեռնարկված բոլոր քրեական դատավարությունները, ներառյալ Յրանտ Դինքի որդու և աշխատակցի՝ Արատ Դինքի և Սարգիս Սերոբյանի դեմ սկսվածները:
- Յրանտ Դինքի դեմ հարուցված պատժավճռի հետմահու կասեցում:

- Հրանտ Դինքի պաշտպանության չիրագործման պատճառների անթերի հետազոտում և ըստ օրենքի պատժում դրա բոլոր պատասխանատուներին:
- Հրանտ Դինքի սպանության հանգամանքների, մասնավորապես աջ ծայրահեղականների և պատվիրատուի միջև եղած կապի անթերի պարզաբանում:
- Խոսքի և մամուլի ընդգրկուն ազատության երաշխավորում: Թուրքական պետությունը պետք է մասնավորապես աջակցի հայոց ցեղասպանության վերաբերյալ ազատ և հրապարակային քննարկման կազմակերպմանը:
- Ի նպաստ փոքրամասնությունների անհատական և կոլեկտիվ իրավունքների օրենքների բարեփոխում և դրանց հետևողական գործադրում:

Բացի այդ մեզ որպես հրատապ անհրաժեշտություն է առարկայանում, որ լրատվամիջոցները և դպրոցական դաստիարակության համար պատասխանատուները հասարակական կարծիքի ձևավորման հարցում իրենց ունեցած պատասխանատվությանը ավելի գործուն կերպով գիտակից դառնան, քան անցյալում էր: Առանձնապես կարևոր և հանձնարարելի է, որ հաղթահարվեն Թուրքիայի հանրապետության էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների հանդեպ գոյություն ունեցող կասկածամտությունն ու ատելությունը: Դուք՝ որպես կառավարության ղեկավար հնարավորություն ունեք որոշակիորեն խթանել այս հարցի կարգավորումը: Հրանտ Դինքը մարդկության հիշողության մեջ կշարունակի ապրել իբրև մի անձնավորություն, որը որպես փոքրամասնության պատկանողի՝ իր սեփական անձի հանդեպ դրսևորված խտրականության փորձառությամբ փորձում էր տեղեկատվության և երկխոսության միջոցով նպաստել մի ավելի մարդկային և ավելի իրավական հասարակության ձևավորմանը: Նա դրա համար է, որ սպանվեց:

Մենք Ձեզ թախանձագին կերպով կոչ ենք անում միջոցառումներ ձեռնարկել, որ նման ճակատագիր չհանդիպի նրանց, որոնք իրավապետական քաղաքացիական հասարակության՝ նրա տեսլական գաղափարը կիսում և շարունակում են զարգացնել: Մեր մտագոհությունները վերաբերում են նաև թուրք առաջին գրական մրցանակակրին՝ պարոն Օրհան Պամուքին: Դեռ 2005 թին նա հարկադրված էր ծայրահեղ ազգայնականների ճնշման ներքո հրաժարվել դասախոսական նպատակներ ունեցող ճանապարհորդությունից: Իսկ այժմ նա աջ ծայրահեղականների կողմից հնչած մահվան սպառնալիքներից հետո հրաժարվել է նաև դեպի Բելգիա և Գերմանիա մի կարճաժամկետ ճամփորդության ձեռնարկումից, որտեղ նրան պատվավոր դոկտորի կոչում պետք է հատկացվեր: Մենք ցավում ենք, որ պարոն Պամուքը դե ֆակտո աբսոր է ուղարկվել: Մենք նրան հաճույքով կողջունեինք Բեռլինի Ազատ համալսարանում:

Ջերմ բարևներով  
Թեսսա Հոֆման